Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 21-ի N 2294 - Ն որոշման

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ՌԷԳ հաշվետվությունը մշակվում է համապատասխան լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:

2. ՌԷԳ հաշվետվությունը կազմվում է՝ հաշվի առնելով հիմնադրութային փաստաթղթի բովանդակությունը և մանրամասնության աստիճանը, դրա վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացի փուլը, հանրության շահերը, առկա գիտելիքները, գնահատման մեթոդները և որոշում կայացնող մարմնի տեղեկատվական կարիքները:

3. Հիմնադրութային փաստաթղթի՝ ՌԷԳ հաշվետվությունը պետք է ներառի՝

1) հիմնադրութային փաստաթղթի համառոտ նկարագիրը, նպատակը, իրականացման ժամկետը, առկայության դեպքում նաև կապը կամ համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված այլ առնչվող հիմնադրութային փաստաթղթերի հետ.

2) ՌԷԳ հաշվետվության ամփոփ բովանդակությունը, որը ներառում է տեղեկատվություն նախաձեռնողի մասին, հիմնադրութային փաստաթղթի ամփոփ նկարագիրը, հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության արդյունքում հնարավոր ազդեցությունների և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումների հանրամատչելի, համառոտ նկարագիրը.

3) հիմնադրութային փաստաթղթի դրույթների գործողության արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա հնարավոր զգալի վնասակար ազդեցությունները կանխելու, նվազեցնելու կամ մեղմացնելու համար միջոցառումները.

4) հիմնադրութային փաստաթղթին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ ստորագրված միջազգային պայմանագրերը և առնչվող այլ իրավական ակտերը.

5) հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնակչության առողջության ներկա վիճակը, սոցիալական գործոնները և խնդիրները.

6) շրջակա միջավայրին, այդ թվում՝ բնակչության առողջությանը վերաբերող միջազգային, ազգային և այլ մակարդակներում սահմանված նպատակները, որոնք վերաբերում են հիմնադրութային փաստաթղթին և այն ուղիները, նկատառումները, որոնք հաշվի են առնվել հիմնադրութային փաստաթուղթը մշակելիս.

7) հիմնադրութային փաստաթղթի նախագծի դրույթների գործողության իրականացման և չիրականացման դեպքերում շրջակա միջավայրի՝ ներառյալ մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, այդ թվում՝ անդրսահմանային.

8) հիմնադրութային փաստաթղթի մոտեցումների բոլոր հնարավոր այլընտրանքային տարբերակների (այդ թվում՝ զրոյական) համեմատությունը և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորումը.

9) հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները, դրանց արդյունավետությունը.

10) հիմնադրութային փաստաթղթի գործողության ընթացքում ազդեցության մշտադիտարկման և հետնախագծային վերլուծության ծրագիրը.

11) սույն հավելվածի 2-րդ կետում նշված գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, տեխնիկական թերությունների, դժվարությունների՝ ներառյալ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

12) հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները.

13) տեղեկատվություն հանրության ծանուցման, քննարկումների արդյունքների, գրավոր կամ բանավոր ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, կարծիքների, դրանց ընդունման կամ չընդունման հիմնավորումների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ